

Բոցերուն մէջ գերդ շէկ Ոգի մը կանգուն
 Կը մըռընչէ, եւ մըռունչով կը պոռթկայ
 Դէպ արեւու համբոյրին՝
 Վըրեժի սերմն անդրանիկ.
 Մինչ ոսթերուն ներթելէ
 Խանձումն ու հոտը մարմնի
 Մեր սեմերէն, օրոցքներէն դէպի վեր,
 Դէպի երկինք կը ճենճերին՝ որոնց դէմ
 Իրենց պինչերը բացած՝
 Ալլահն ամպին մէջէ, Սուլթանը ցեխին
 Յոտոտելով փոխն ի փոխ՝
 Կը ժըպտին հաշտ իրարու,
 Ու Եւրոպան դէմքն իր ետել դարձուցած
 Կոպերը թաց կը շըփէ -
 Մեր ծուխէն աչքն իր բոզի
 Կըսկըծելո՛ւն համար լոկ:

Է

Կեցի՛ր, կեցի՛ր, ո՛վ բարբարոս դու Ոգի,
 Ելլեսպոնտի եզերքին վրայ ա՛լ կեցի՛ր.
 Սա սել ժայռին՝ ուր ծովն իր բանտը կու լայ,
 Թող ձիդ խըրտչած Մեռնողներուն հռընդիւնէն՝
 Գերմարդկային գութի մ'ահեղ սարսուռով՝
 Իր պինչերէն, իր բաշերէն, ազիէն
 Բոլո՛ր, բոլո՛ր մեր արիւնները թօթուէ:
 Կեցի՛ր ու հեղ մը հետքիդ վրայ ընկըրկէ՛.
 Տե՛ս. աւասիկ ամէն ինչ
 Կը գալարուի, կը ճարճատի, կը մեռնի,
 Ծուխ է, մոխիր եւ ակեր:
 Արեան ծովու մ'ալիքներէն կը ծըփան